

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

31.05.2022թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2022/8-2» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան

«_____» _____ 20____թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Գուրգեն Քարտալյան» Ա/Ձ-ն, ի դեմս Գ. Քարտալյանի, որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 31.05.2022թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2022/8-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.8-րդ կետերը, «Գուրգեն Քարտալյան» Ա/Ձ-ի կողմից 24.06.2022թ.-ին ներկայացրած թիվ 2595/04 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 31.05.2022թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2022/8-2» գնման պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2022 թվականի հուլիսի 20-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԳՆՈՐԴ»

Չարենցավան համայնք
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132000135
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալոյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

«Գուրգեն Քարտալյան» Ա/Ձ
ք. Երևան, Ֆուչիկի 1-ին նրբ. 7 շ. բն. 35
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163218023584
ՀՎՀՀ 27940162
Էլ. փոստ՝ mnatsakanyan.gorc04@mail.ru
Հեռ. (+37498) 35-35-02

Գ. Քարտալյան

(ստորագրությունը)
Կ.Տ